ձակալներ (զաբիթներ) հանդես են եկել և՛ բարձրաստիճան պաշտոնյաներ (Աղերբայջանի վեզիրն ու Երևանի բեկլարբեկին), և՛ մանր ու խոշոր հողատիրության և քաղաքային արիստոկրատիայի ներկայացուցիչներ (Իսախան բեկն ու Խոսրով աղան)։

Զաքարիա Ագուլեցու տվյալներով պարզվում է նաև, որ զաբիթները միաժամանակ օգտվում էին դատական ֆունկցիաներից։ Այսպես, նույն Իսախան բեկի մասին գրում է. «Իսախան-բեկն ինքն Ըսպահանայ, ամայ գեղրանքի ղիվան թե մալիջհաթն կիտելն իւր տղայ Մուսաբեկն ա անում»[48]։ Իսկ մի այլ տեղ կարդում ենք. «1128-ումն (1679) Աքուլաց հաքիմն էր Մուսաբեկի թոռ Մուսաբեկն»։

Վերոհիշյալ փաստերի հիման վրա կարելի է ասել, որ Արևելյան Հայաստանում որոշ թվով գյուղեր պատկանել են արքունիքին և կոչվել են «խասս» կամ «խասսե-յե շարիֆե»։ Խասս գյուղերից ստացվող ամբողջ ռենտա-հարկը գանձվել է «խասսե-յե շարիֆեի սարքարության» պաշտոնյաների՝ «խասսեդարների» միջոցով, որոնք միաժամանակ օգտվում էին կարգապահական և դատական ֆունկցիաներից և զբաղեցնում «դարուղայի» (ոստիկան) պաշտոնը։ Խասս գյուղերը նմանապես վարձակալվել են առանձին վարձակալների կողմից, որոնք կոչվում էին «զաբիթներ» կամ «մուսթա՛ջիրներ» և վարձակալության շրջանում օգտվում էին համարյա այն բոլոր իրավունքներից, որոնք վերապահված էին «խասսեդարներին»։

ГОСУДАРСТВЕННЫЕ И ДВОРЦОВЫЕ ЗЕМЛИ И ПОРЯДОК РАСПРЕДЕЛЕНИЯ ИХ ДОХОДОВ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В XVI—XVII ВВ.

(Р е з ю м е)

А. Д. ПАПАЗЯН
Канд. ист. наук

Государственные земли или «дивани» в Восточной Армении значительно расширились в XVI—XVII вв. Поскольку они находились в распоряжении финансового управления при Сефевидском дворе, поступающие от них доходы выдавались в виде «тиула» и «хамесале» воинству, государственным чиновникам и высшему духовенству в качестве вознаграждения за государственную и военную службу.

На основании изучения исторических источников и новых архивных материалов в статье рассмотрены формы реализации ренты—налога, взимавшейся с сел «дивани», опубликованы новые данные, относящиеся

[48] Զաքարիա Ագուլեցի, *օրագրություն, էջ 134—135։*